## II.

## ՄԵՐԳԱՐԱՆԱԿԱՆ ՑԵՂԵԿՈՒԹԻՆՆԵՐ

Բոշան մանկութիւնից ի վեր չարքաշ կեանք է վարում և դրա համար էլ առողջակազմ է։ Ոչ մի պակասաւոր անդամով—կոյր, խուլ կամ համր գրեթէ չէ կարելի գտնել նրանց մէջ. զառամութեան հասած ծերը կամ պառաւն իսկ սրատես է, սրալուր և առոյգ։ Քայլում են ուղղաձիգ։ Թէև մաքրութեան վրայ երբէք հոգ չեն տանում, օրինակ երես լուանալ կանոնաւորապէս չունին, բայց հիւանդութիւն նրանց մէջ սակաւ է։ Մանուկները փոքրութիւնից վարժւում են տաքի, ցրտի, կիսամերկութեան, ծուխի, ամէն տեսակ զրկանքի. թոյլերը ընկճվում մեռնում են այդ տեսակ կեանքի մէջ և ուժեղները ապրում. կատարւում է մի տեսակ ընտրականութիւն (sélection) և բոշա ժողովուրդը կազմւում է առողջ, ուժեղ և դիմացկուն անդամներից։ Նատ ծնողներ մանուկներին ֆիզիքական կրթութիւն են տալիս՝ ձմեռը կիսամերկ դլորելով ձիւնի մէջ և ամառը ման ածելով կիզիչ արևի տակ. սառը ջրով լողացնելը մի ամենագործածական սովորութիւն է. մանուկին ոչ հագցնում են և ոչ էլ ոտքը գուլպայում. բոշա մանուկը գրեթէ միշտ ոտաբոբիկ է և գլխաբաց թէ ամառ և թէ ձմեռ։

Այդպիսի կեանքը բոշայի մորթուն տուել է մի տեսակ գեղնաւուն-սև գոյն. մազերը սև են և խանձուած, անդամները ջղուտ և ամուր։

Բոշա տղամարդը առհասարակ միջահասակ է կան կարճեր էլ։ Նրա դէմքը ձուձև է, ճակատը նեղ և ետ փախ-

չող, մռութը մեծ և բաւական դուրս ցցուած, աչքերը սև, երբեմն գորշ և կապոյտ. կոպերի մէջ տեղի տարածութիւնը նեղ։ Ընդհանրապէս նրա դէմքի գծագրութիւնը կոպիտ չէ. մազ չէ թողնում և մորուքը կլոր ձևով կարճ ու կտրած է։

Բուշա կինը առհասարակ համակրելի գծագրութիւն ունի. երիտասարդները գեղեցիկ են և երբեմն այնպիսի կրակոտ, արտայայտիչ աչքերով ու գիրգ թշերով, որ կարելի է համարձակ կերպով նրանց եզակի գեղեցկուհիներ անուանել։ Սակայն պառաւներն իսկ անախորժ տգեղութիւն չեն ունենում։ Պառաւների աչքերն անգամ սուր են և արտայայտիչ։

Բուշա տղամարդի գանգի ձևը ընդհանրապէս կլորագլուխ է (bracicéphale). բայց գանգի չափը (indice céphalique) ներկայացնում է 77,40, որի հիման վրայ կարելի է դասել նրան, ըստ մարդաբանական լեզուի՝ *մէզատոսէֆալների* կարգում (mesatocéphale)։

Բուշան առհասարակ սաստիկ սրատես է և սրալուր, իսկ ձայնը՝ տղամարդկանցը մեղմ է, ախորժալուր և թափառող կանանցը՝ սուր ու ճչացող։ Տղամարդիկ խօսում են հանդարտ, ցած ձայնով և ծանր. կանայք ընդհակառակն արագ, վրայ տալով և երբէք չեն վարանում ու կանգ առնում. շուարել ասած բանը նրանք չգիտեն. «խօսքը ջէրն ունին» ասում է նրանց մասին շրջապատող հասարակութիւնը։

Կինը հայ բուշաների մէջ մեծ դեր է խաղում. նա է տան աշխատաւորը թէ ներսում և թէ դրսում. տղամարդը միայն գործաւոր է, որ օրը մինչև երեկոյ կամ նստած մաղ է գործում և կամ ծխում է և խօսում. դրա համար էլ նա համեմատաբար դանդաղ է, ծանրաշարժ, մինչև իսկ ծոյլ։ Իսկ կինը անդադար շարժվում է, անընդհատ գործում. ոչ մի րոպէ նրա ձայնը չէ լռում, ոչ մի րոպէ նա հանգստանալ չգիտէ։ Միշտ արագաշարժ, ճարպիկ, խօսուն, սրամիտ և աշխոյժ է բուշա կինը որպէս դրսում, այնպէս և տան մէջ։ Եւ նկատելի է, որ բուշա կինը շատ աւելի լաւ, վայելուչ ու երկար հասակ ունի քան բուշա տղամարդը, որ կըծ-

կուած է, վախկոտ ու զգուշաւոր։ Բոշա կինն է, որ ցուպը ձեռքին խմբի առաջն է գնում, արգելքները տապալում և պէտք եղած ժամանակ իր ահռելի մահակով առիւծի պէս կռվում։ Ֆիզիքական, կազմուածքի ոյժի կողմից կինը շատ աւելի բարձր է. նոյնն է և մտաւորականում. բոշա տղամարդը դանդաղամիտ էլ է, մանաւանդ երբ հասակն առնում է. իսկ բոշա կինը զառամած հասակումն իսկ սրամիտ է և ընդունակ։ Նա իսկոյն ըմբռնում է, ունի սուր հոտառութիւն, գիտէ արագ վճռականութեամբ օգտուել հանգամանքներից, կարկեցնելու չափ յարմար պատասխաններ տալ, զարմանալի մանրակրկիտութեամբ չմոռանալ ոչ մի մանրամասնութիւն թէ տնտեսական գործերում և թէ օտարների հետ ունեցած յարաբերութեանց մէջ։ Նա ոչնչից չէ վախենում, չէ քաշւում, ոչնչի առաջ կանգ չէ առնում. չունի ոչ մի սնոտիապաշտութիւն, ոչ մի նախապաշարմունք, բայց և հեռատես է և զգուշաւոր՝ երբ խնդիրը իր շահերին է վերաբերում *)։

Բոշա կինը իր վսեմ համարձակութեամբ, վարքի անքիծ մաքրութեամբ և օջախի պատիւը բարձր պահելու դիւցազնական ոգով յիշեցնում է հռովմայեցի կանանց։ Հասակը, կազմուածքի վայելչութիւնը և գեղեցկութիւնը կոնտրաստ է կազմում բոշա տղամարդու արտաքինի հետ։ Եւ բոշա կինը մարդաբանական նկարագրութիւնով էլ զանազանւում է բոշա տղամարդուց։ Նրա գանգի չափն է 80։ Դէմքը պակաս ձուաձև է, ճակատը աւելի ուղիղ և մռութը ոչ այնքան դուրս ցցուած։ Նա *սու-բրակիսէֆալ* է (sous bracichépale)։

---

*) Բոշաների տիպեր լուսանկարելիս մեզ յաճախ պատահեց, որ բոշա տղամարդը խուսափում էր հանուելուց, մինչ բոշա կինը համարձակ թողնում էր նկարելու, մանաւանդ եթէ վարձի ձայն էր լսում։ Մի բոշա կնոջ պատկեր պատրաստւում էի հանելու և նա կանգնել էր, երբ ամուսինը ներսից վախեցած ու գոռալով դուրս թռաւ և կնոջը ներս կանչեց ու դուռը փակեց մեզ վրայ։